14040

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Համբարձում Մաթևոսյան
«16» 12 2025 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 284 - 25

Նախաձեռնող՝ *«ԱՍՍԱԹ» ՍՊԸ*
ք երևան, Վերին Անպտուղային, 127/1,բն. 7

Գործունեությունը՝ *Քարաբերդի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամասի (№366 ընդերքօգտագործման իրավունք) ժամկետի երկարաձգման, սպորգետնյա հանքի օգտակար հանածոյի արդյունահանում*
Լոռու մարզ

Առդիր՝ 12 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 284 - 25

«16» դեկտեմբերի 2025թ.

Լոռու մարզի Քարաբերդի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամասի (№366 ընդերքօգտագործման իրավունք) ժամկետի երկարաձգման, ստորգետնյա հանքի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝ «ԱՍՍԱԹ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Տեղադրման վայրը՝ Լոռու մարզ, Փամբակ համայնք, գ. Քարաբերդ

Ներածական մաս. «ԱՍՍԱԹ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից նախատեսվում է Քարաբերդի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամասի (№366 ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի երկարաձգման) ստորգետնյա հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ, ինչի համար մշակվել է նախագիծ և կազմվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ բ. ենթակետի՝ Ընկերության կողմից նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Ա» կատեգորիայի:

Քարաբերդի ոսկու հանքավայրը լեռնագրական տեսակետից գտնվում է Բազումի լեռնաշղթայի հարավային լանջին՝ Փամբակ գետի ձախ ափին, 1500-1750 մ բացարձակ բարձրությունների վրա: Աշխարհագրական տեսակետից հանքավայրի տարածքը բնութագրվում է տիպիկ բարձր լեռնային, խիստ կտրտված ռելիեֆով, որտեղ առկա են խոր ձորեր և խոշոր բարձրացումներ՝ լեռնաշղթաների և առանձին գագաթների տեսքով: Ռելիեֆային առանձնահատկություններով պայմանավորված է մակերևութային հոսքերի և ստորգետնյա ջրերի բացակայությունը:

Քարաբերդի հանքավայրի ապարների խիստ ճեղքավորվածությունը նպաստավոր պայմաններ է ստեղծում մակերևութային ջրերի ներծծման համար, իսկ խորը հորիզոնների ստորերկրյա ջրերի ձևավորման գործում մեծ դեր են խաղում հիդրոթերմալ խիստ փոփոխված, ճեղքավորված ապարների գոտիները:

Հանքավայրը վարչական տեսանկյունից գտնվում է Լոռու մարզի Փամբակ համայնքի Քարաբերդ բնակավայրի վարչական սահմաններում: Ամենամոտ բնակավայրը Քարաբերդ

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

գյուղն է, որը գտնվում է հանքավայրից հյուսիս-արևմուտք և վերջինիս հետ կապված է 1.5 կմ երկարությամբ գրունտային ճանապարհով: Վանաձոր-Ալավերդի մայրուղու և Վանաձոր երկաթուղային կայարանի հետ հանքավայրը կապված է համապատասխանաբար՝ 5կմ և 9կմ երկարությամբ գրունտային (5 կմ) և ասֆալտապատ (4 կմ) ճանապարհներով:

Նկարագրական մաս. Ընկերությունը արդյունահանման աշխատանքներն իրականացրել է թիվ 29/366 արդյունահանման թույլտվության սահմաններում (որի գործողության ժամկետը լրացել է 06.06.2024թ.-ին), որի լեռնահատկացման սահմաններում Ընկերությանը տրամադրված տարածքը կազմում է 20.3 հա և եզրագծվում է հետևյալ ծայրակետային կոորդինատներով (կոորդինատային համակարգը՝ WGS-84, ARMREF 02).

Կետը	X	Y
1	4522162	8458970
2	4522228	8458984
3	4522226	8459378
4	4521927	8459635
5	4521699	8459525

Նշված ծայրակետային կոորդինատներով տարածքը, համաձայն կադաստրի կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվության, հանդիսանում է Լոռու մարզի Փամբակ համայնքի Քարաբերդ բնակավայրի՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական ու անտառային նպատակային նշանակությունների հողամասեր (հանքավայրի լեռնահատկացմամբ տրամադրված տարածքում անտառներ առկա են արևմտյան մասում, որտեղ նախատեսված է միայն ստորգետնյա շահագործման աշխատանքներ): Սույն նախագծով նախատեսված աշխատանքներն իրականացվելու են ստորգետնյա եղանակով, որի արդյունահանման աշխատանքների կազմակերպման համար նախատեսված արտադրական հրապարակը գտնվելու է «ԱՍՍԱԹ» ՍՊԸ-ին հատկացված հողհատկացման՝ 06-108-0206-0002 ծածկագրով հողամասի (համայնքային սեփականության արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արդյունաբերականի ընդերքի օգտագործման) սահմաններում, որտեղ անտառային հողեր հաշվառված չեն:

Փոփոխված նախագծով նախատեսված արդյունահանման աշխատանքներն իրականացվելու են ստորգետնյա եղանակով: Համաձայն տեխնիկական առաջադրանքի՝ ստորգետնյա հանքի տարեկան հաշվարկային արտադրողականությունն ըստ շահագործական պաշարի (ապրանքային հանքաքարի) ընդունված է 30,000 տ/տարի (12,000 մ^3/տարի): Հանքի ծառայման ժամկետն ընդունված է 9 տարի: Նախագծի իրականացման արդյունքում լրացուցիչ վերգետնյա հողային մակերեսներ չեն խախտվելու, իսկ ստորգետնյա արդյունահանման աշխատանքների կազմակերպման համար նախատեսված արտադրական հրապարակը գտնվելու է Ընկերությանը հատկացված՝ 06-108-0206-0002 ծածկագրով հողամասի (համայնքային սեփականության արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության ընդերքի օգտագործման) սահմաններում:

Հանքաքարի ֆիզիկամեխանիկական հատկությունները կանխորոշում են նրանց նախնական փխրեցումը հանույթաբարձման աշխատանքներից առաջ: Ապարների նախնական փխրեցումը նախատեսվում է կատարել հորատապայթեցման աշխատանքների

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

միջոցով: Հանքի արդյունաբերական հրապարակը նախատեսվում է ձևավորել թիվ 3 բովանցքի մուտքի շրջակայքում:

Հանքային մարմինների բացումն իրականացվելու է կոմբինացված՝ թիվ 3 հանքուղիով և տեղամասային թեքատով: Որպես հիմնական տրանսպորտային հանքուղի ընդունված է թիվ 3 բովանցքը և տեղամասի թեքատը: Հանքավայրի բացումը կատարվում է թիվ 3 բովանցքի լայնացմամբ, գծատարման շտրեկի, օդափոխման և բլոկային վերընթացների անցմամբ: Հանքավայրի հետախուզման ժամանակ անցած թիվ 3 բովանցքն ունի 5.1 մ^2 ընդլայնական կտրվածք: Ինքնագնաց «XUL202» մեքենայի լիարժեք աշխատելու համար բովանցքը լայնացվում է մինչև 7.2 մ^2 (լույսում) կտրվածքը: Լայնացման աշխատանքների կատարման և նոր կտրվածքների անցման համար նախատեսվում է ինքնագնաց մեքենայի կիրառում:

Ստորգետնյա հանքի շինարարության համար լեռնակապիտալ աշխատանքների ծավալները որոշված են՝ ելնելով հանքի բացման, մշակման, օդափոխության և հանքաքարի մինչև թիվ 3 հանքուղու մուտքի մոտ բեռնաթափման կետ տեղափոխելու տեխնոլոգիական սխեմայից: Լեռնակապիտալ և նախապատրաստական աշխատանքների ընթացքում առաջացող փորվածքները կկազմեն՝ հանքամարմնում՝ 17890.2 մ^3, դատարկ ապարներում՝ 2645.6 մ^3, ընդամենը՝ 20535.8 մ^3:

Հանքաքարը 2 հանքային մարմինների շահագործական հանքախորշերից բարձող-տեղափոխող ինքնագնաց «XUL202» մեքենայով տեղափոխվելու է դեպի թիվ 3 հանքուղու մուտքի մոտ նախատեսվող բարձման հրապարակը, որտեղից էլ այն տրվելու է հանքահարստացման կետին: Ջրահեռացումը թիվ 3 բովանցքի հորիզոնից վերև իրականացվելու է ինքնահոս կերպով, իսկ 3 բովանցքի հորիզոնից ներքև՝ 1660 մ նիշում տեղադրվող պոմպերի միջոցով: Հանքն օդափոխվելու է ներմղման եղանակով: Որպես օդափոխման գլխավոր օդափոխիչ ընդունված է «ВЦ-11» կենտրոնախույս օդափոխիչը:

Ուղղաձիգ փորվածքներն անց են կացվելու «КПВ-4А» անցումային համալիրով կամ սովորական եղանակով՝ հորատամուրճերի օգնությամբ: Հորիզոնական փորվածքների անցումն իրականացվելու է «YT29A» հորատամուրճերի կիրառմամբ: Որպես ապարաբարձիչ-տեղափոխող մեխանիզմ նախատեսվում է «XUL202» մակնիշի բարձող-տեղափոխող ինքնագնաց մեքենան (շերեփի տարողությունը 1.2մ^3):

Հանքավայրի շինարարության և շահագործման համար անհրաժեշտ բոլոր ստորգետնյա լեռնային փորվածքների անցումը նախատեսվում է իրականացնել հորատապայթեցման աշխատանքների կիրառմամբ: Փորվածքների ընդլայնական կտրվածքները որոշված են՝ համաձայն անվտանգության միասնական կանոնների պահանջների: Միաժամանակ պայթեցվող պայթուցիկ նյութի քանակն է 120.0 կգ:

Որպես մշակման տարբերակ ընդունվել է վարընթաց շերտերի հանումով և պոկված կողային ապարներով հանույթային տարածության լցումով մշակման համակարգը: Տվյալ մշակման համակարգի համար նախատեսված է փայտանյութով ամրակապում, ինչը ներառված է նաև նյութերի հաշվարկի աղյուսակում: Շահագործական բլոկի կտրումը նախատեսվում է ենթահարկային շտրեկներով, որոնք անց են կացվում բլոկային վերընթացներից: Հանքաքարի պոկումն իրականացվում է ուղղաձիգ կամ սակավաթեք պայթանցքերով: Հանաքաքարը ծանրության ուժի տակ բաց է թողնվում հարթ հատակի վրա, որտեղից էլ բարձող-տեղափոխող մեքենաների օգնությամբ տեղափոխվում է բեռնաթափման կետ:

Նախատեսվող գործունեության շրջանակներում իրականացվող լեռնակապիտալ աշխատանքների ընթացքում (բովանցքի ընլայնական կտրվածքի լայնացում, թեքատներ, օդափոխության և այլ ենթակառուցվածքների տեղադրում) կառաջանա 2,646 մ^3 կամ 6,615 տ ծավալով դատարկ ապարներ: Աշխատանքները նախատեսված են իրականացնել «XUL 202» մակնիշի ինքնագնաց բարձող-տեղափոխող մեքենայով:

Քարաբերդի ոսկու հանքավայրի ստորգետնյա հանքից հանքաքարի գծատարումը նախատեսվում է կատարել «SANDVIK» ֆիրմայի արտադրության 1.2 մ^3 շերեփի տարողությամբ ինքնագնաց բարձող-տեղափոխող մեքենայի միջոցով: Հանքաքարի տեղափոխումը նախատեսվում է մինչև 11.5 կմ հեռավորության վրա գտնվող Վանաձոր քաղաքի Ե/գ կայարան, որտեղից էլ նախատեսվում է Ե/գ տրանսպորտով տեղափոխել մինչև Արարատ գտնվող ոսկու կորզման ֆաբրիկա կամ այլ գործող ֆաբրիկա: Հանքաքարի տեղափոխումը մինչև Վանաձոր քաղաքի Ե/գ կայարան նախատեսվում է կատարել 10տ բեռնատարողությամբ «ԿԱՄԱԶ» ավտոինքնաթափի միջոցով:

Հանքն օդափոխման համար նախատեսված է թարմ օդի ներմղման եղանակը: Օդի քանակի հաշվարկները կատարվել են՝ ելնելով ինչպես մաքրման եղանակներից, այնպես էլ կապիտալ և նախապատրաստական փորվածքների օդափոխության պայմանից և կազմում են.

- ըստ պայթուցիկ նյութի ծախսի՝ 16.5 մ^3/վրկ,
- ըստ ստորգետնյա հանքում ինքնագնաց մեքենայի կիրառման՝ 7.91 մ^3/վրկ,
- ըստ հանքում միաժամանակ աշխատող մարդկանց քանակի՝ 4.13 մ^3/վրկ,
- ըստ հանքից փոշեհեռացման՝ 8.3 մ^3/վրկ,
- ըստ ստորգետնյա փորվածքներում օդի շարժման նվազագույն արագության՝ 10.9 մ^3/վրկ:

Ստորգետնյա հանքի և նրա արտադրական հրապարակի խմելու ջրամատակարարումը (աշխատողների խմելու, տնտեսական կարիքների համար) նախատեսվում է ապահովել բերովի ջրով՝ ցիստեռներով: Հանքավայրի շահագործման ընթացքում աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը կկազմի 3.508 մ^3/օր կամ 1069.9 մ^3/տարի: Կենցաղային կեղտաջրերի ծավալը կկազմի 1,053.86 մ^3/տարի: Աշխատանքային հորիզոնում (1680 մ նիշում՝ թիվ 3 բովանցք) նախատեսված է զուգարան՝ սեպտիկ հորով (անթափանց հատակով և պատերով), ինչը պայմանագրային հիմունքներով պարբերաբար մաքրվելու է մասնագիտացված ծառայության միջոցով:

Քարաբերդի ստորգետնյա հանքավայրի շահագործման ընթացքում տեխնիկական ջուրը ծախսվելու է պայթանցքերի հորատման աշխատանքների ընթացքում, հանքազանգվածի խոնավացման և արտադրական հրապարակում փոշենստեցման համար:

Տեխնիկական ջրամատակարարումն ինչպես նախկինում, իրականացվելու է Փամբակ գետից՝ շրջակա միջավայրի նախարարության կողմից տրամադրված թիվ 0141 ջրօգտագործման թույլտվությամբ (3.568 հազ.մ^3/տարի կամ 0.55լ/վրկ ծավալով): Այն արտադրական տարածք կբերվի KO-002 ջրցան-լվացող մեքենայով: Ստորգետնյա հանքի շահագործման ժամկետի երկարաձգման թույլտվությունը ստանալու դեպքում, Ընկերությունը կդիմի շրջակա միջավայրի նախարարություն՝ Փամբակ գետից ջրառ իրականացնելու համար նոր թույլտվություն ստանալու նպատակով:

Պայթանցքերի հորատման աշխատանքների ընթացքում տեխնիկական ջրի օրական ծախսը կկազմի 12600 լ կամ 12.6 մ^3, տարեկան ծախսը՝ 3,843 մ^3:

ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Փոշենստեցման մակերեսները կկազմեն՝ հանքի արտադրական հրապարակ - 581 մ², մոտեցող ավտոճանապարհներ - 844 մ², ընդամենը՝ 1425 մ²: Տարեկան ջրածախսը կկազմի՝ 434.625 մ³:

Ստորգետնյա հանքից հեռացվող հանքաջրերը՝ 139.2 մ³/օր ծավալով, ակտիվ ռեագենտային մշակման եղանակով կենթարկվեն մաքրման, մաքրումից հետո միայն կհեռացվեն Փամբակ գետ: Ստորգետնյա հանքից ջրհեռացումը կատարվում է.

- Հանքուղի №3-ի հորիզոնից (1680 մ) վերև ինքնահոս կերպով՝ գոյություն ունեցող հանքուղով, որը լայնացվելու է: Ջրի ընդհանուր ելքն, ըստ երկրաբանական հաշվետվության տվյալների, կազմում է 1.3 լ/վ,
- Հանքուղի №3-ի հորիզոնից ներքև՝ հանքուղու հորիզոնից ներքև (1660 մ) նախատեսված տեղային պոմպերով, որտեղից ջուրը մղվելու է հանքուղու հորիզոն (1680 մ), այնուհետև, ինքնահոս կերպով, հանքուղու ջրհեռացման առվով դուրս է գալիս մակերևույթ:

Ստորգետնյա հանքից հանքաջրերի արտամղման համար ընտրվում է «Flygt 2000» մակնիշի պոմպը՝ 3-950 մ³/ժամ արտադրողականությամբ: Չնայած հանքաքարում ծծմբի ցածր (0.14%) պարունակությանը, այնուամենայնիվ, Ընկերությունը նախատեսում է հանքաջրերի կանոնավոր մոնիթորինգ և մաքրում ակտիվ ռեագենտային մշակման եղանակով, որն իր մեջ ներառում է հետևյալ տեխնոլոգիական փուլերը/լուծումները՝

1) Ալկալիներով (կրաքար $Ca(OH)_2$ կամ չհանգած կիր CaO, նատրիումի հիդրօքսիդ NaOH) չեզոքացում:

2) pH-ի ցուցանիշի բարձրացում, ինչը հանգեցնում է Fe, Al և այլ մետաղների նստեցմանը (հաջորդաբար տարբեր pH-ներով):

3) Սկզբում նստեցվում է Fe-ը (pH ≈ 3-4 հիդրօքսիդների/օքսիդների համար), այնուհետև բարձրացվում է մինչև 7-9՝ Al-ի և այլ մետաղների ամբողջական նստեցման համար:

4) Չեզոքացումից հետո կիրառվելու են ֆլոկուլյանտներ՝ նստվածքառաջացման գործընթացն արագացնելու և պղտորությունը նվազեցնելու համար:

Մաքրման գործընթացն իրականացվելու է արտադրական հրապարակում 144 մ³ ծավալ ունեցող երկու ավազաններում (յուրաքանչյուրը՝ 72 մ³ ծավալով), որոնք ունեն հետևյալ չափերը՝ երկարությունը՝ 6 մ, լայնությունը՝ 6 մ, խորությունը՝ 4 մ: Առաջին ավազանում ներմուծվում է կրաքարը կամ չհանգած կիրը, ապա ֆլոկուլյանտներ, որոնց քանակը պայմանավորված է ավազան լցվող հանքաջրի քիմիական բաղադրությունից: Մաքրման՝ չեզոքացման արդյունքում, մաքրված պարզվածքը հոսում է դեպի երկրորդ ավազան, որտեղից էլ ուղղվելու է Փամբակ գետ: Ավազաններից հնարավոր արտահոսքերը բացառելու նպատակով՝ դրանց հատակը և պատերը ծածկվելու են գեոմեմբրանով:

Քարաբերդի ոսկու հանքավայրի ստորգետնյա հանքի շահագործման ժամանակ առաջանալու են.

Փոշու արտանետումներ՝

- լեռնակապիտալ աշխատանքներից (առաջին տարվա ընթացքում),
- պայթեցման աշխատանքներից,
- հանքաքարի բեռնման աշխատանքներից,
- ստորգետնյա հանքում փորման և տրանսպորտի տեղաշարժման աշխատանքներից:

02543163
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Գազային արտանետումներ՝

- հանքային տեխնիկայի շահագործումից,
- բեռնատարների շահագործման ընքացքում:

Այս արտանետումներն առաջանում են շարժիչներում վառելանյութի՝ դիզելային վառելքի այրման գործընթացում: Փոշու և գազերի (ածխածնի և ազոտի օքսիդներ) համազարկային արտանետումների աղբյուր են հանդիսանում պայթեցման աշխատանքները: Հաշվի առնելով պայթյունի ազդեցության միջին տևողությունը՝ 10 րոպե, վայրկյանում փոշու արտանետումը կկազմի՝ 12.744 գ/վրկ: Տարեկան արտանետումները հաշվարկվում են ըստ պայթուցիկ նյութի տարեկան ծախսի, ինչը կազմում է 43.2 տ, հետևաբար փոշու տարեկան արտանետումը կկազմի 2.332 տ/տարի: Պայթեցման ժամանակ կառաջանա նաև ազոտի երկօքսիդի և ածխածնի օքսիդի արտանետումներ, որոնց քանակները կկազմեն՝ ազոտի երկօքսիդի համար՝ 4.85 գ/վրկ կամ 0.888 տ/տարի, իսկ ածխածնի օքսիդի համար՝ 3.009 գ/վրկ կամ 5.551 տ/տարի: Պայթեցման աշխատանքները հանդիսանում են կարճաժամկետ, առաջացող արտանետումները դասվում են զարկային արտանետումների շարքին:

Հանքի շահագործման ժամանակ փորման, բեռնման և տրանսպորտի տեղաշարժման ժամանակ առաջացող փոշու մոտ 30-50%-ը նստում է ստորգետնյա հանքի պատերին և հատակին, իսկ մնացածն օդափոխության համակարգով արտանետվում է մթնոլորտ: Այս արտանետումը հանդիսանում է ստորգետնյա հանքի շահագործման անշարժ աղբյուր, որի համար ՇՄԱԳ հաշվետվությունում իրականացվել է մթնոլորտային արտանետումների ցրման հաշվարկ՝ «Эко-Центр» համակարգչային ծրագրով: Որպես փոշու արտանետման անշարժ աղբյուր ընդունվել է պայմանական հարթակ: Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում վնասակար նյութերի արտանետումների գումարային տարեկան ծավալը կկազմի մոտ 14.317 տ, որից փոշու և պինդ մասնիկների քանակը կկազմի 8.051 տ, մնացածը գազային արտանետումներ են: Մթնոլորտային արտանետումների համակարգչային ցրման հաշվարկի համաձայն՝ մոտակա բնակելի հատվածում փոշու արտանետումների քանակները չեն գերազանցում նորմատիվներով սահմանված ՍԹԿ ֆոնային արժեքները (որոնք սահմանված են ՀՀ կառավարության 02.02.2006 թվականի № 160-Ն որոշմամբ): Մթնոլորտային օդին հասցվող տնտեսական վնասը ՇՄԱԳ հաշվետվությունում գնահատվել է 1,725,203 ՀՀ դրամ:

Ստորգետնյա լեռնային փորվածքներում փոշեկանխման համար ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված են միջոցառումների համալիր, որոնցից կարևորվում են հետևյալները.

- Պայթանցքերի հորատումն իրականացնել ջրի մատուցմամբ՝ օդում փոշու (կախված մասնիկների) քանակը նվազեցնելու նպատակով: Ջրի ծախսը պայթանցքերի հորատման ժամանակ կկազմի 5լ/րոպե՝ ձեռքի հորատման մուրճով և 7լ/րոպե՝ տելեսկոպային հորատման մուրճով հորատման ժամանակ:
- Լեռնային զանգվածի բարձման ժամանակ ապահովել վերջինիս խոնավացումը 4-10% սահմաններում:
- Աշխատանքային գոտիներում և օդափոխության թարմ շթի ուղիներում իրականացնել փորվածքների պատերի պարբերաբար լվացում՝ փոշուց:
- Պայթեցման աշխատանքների կատարման ժամանակ ապահովել փոշեկանխումը ջրային մառախուղերով, որով փորվածքները լցվում են անմիջապես պայթեցումից առաջ:

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Մառախուղ առաջացնող ջրաշիթը պայթեցումից առաջ ուղղել պայթեցման ալիքի շարժմանն ընդառաջ:

Թվարկված միջոցառումների իրականացման արդյունքում ապահովվելու են վնասակար արտանետումների թույլատրելի սահմանային խտությունները (համաձայն ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 7-ի N160-Ն որոշման):

Համաձայն ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» ՀՀ շինարարական նորմերի՝ բազմամետաղային հանքերի համար ՍՊԳ-ն կազմում է 500 մ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մոտակա բնակավայրը գտնվում է ավելի քան 1 կմ հեռավորության վրա, հատուկ միջոցառումներ ՍՊԳ կազմակերպման նպատակով չեն նախատեսվում և պահանջվող չափանիշներն արդեն իսկ պահպանված են:

Նախագծով նախատեսվող գործունեության իրականացման համար կազմակերպվելու է արտադրական հրապարակ և կառուցվելու է մոտեցման ճանապարհ, որի արդյունքում կխախտվի լրացուցիչ հողատարածք: Նախկինում առաջացած և պահվող 230 մ^3 ծավալով հողի բերրի շերտին նախագծի իրականացման արդյունքում կավելանա ևս 285 մ^3-ը: Գումարային՝ 515 մ^3 ծավալով հողի բերրի շերտը պահվելու է հատուկ պայմաններում և գործածությունը ու հետագա օգտագործումը ռեկուլտիվացման նպատակներով իրականացվելու է Կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն և 2011թ-ի սեպտեմբերի 8-ի N1396-Ն որոշումներով սահմանված ընթացակարգերով:

Հողային ռեսուրսները կխախտվեն ճանապարհների և հարթակների շինարարության, ինչպես նաև դատարկ ապարների կուտակման արդյունքում: Սույն նախագծով գործող թույլտվությամբ նախատեսված և տրամադրված հողամասերի սահմաններից դուրս նոր հողամասերի ընդգրկում չի նախատեսվում:

Մինչ Ընկերության ՇԱԹ-29/366 օգտակար հանածոյի արդյունահանման լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը՝ փաստացի խախտված հողերը հետևյալն են.

1) Քարաբերդի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամասում «ԱՍՍԱԹ» ՍՊԸ-ի լեռնահատկացման սահմաններում (Հանքավայրի տարածք) բացահանքի շահագործմամբ խախտված հողերի ընդհանուր մակերեսը կազմում է 1.1 հա, ինչպես և նախատեսված էր գործող արդյունահանման նախագծով:
2) Լցակույտերի տարածքում տեղադրվել են 63,300 մ^3 ծավալով մակաբացման ապարներ՝ 12,700 մ^2 մակերեսում,
3) 230 մ^2 մակերեսի վրա պահվում է Քարաբերդի ոսկու հանքավայրի բացահանքի տարածքից հեռացված 140 մ^3 հողաբուսական շերտը:

Փոփոխված նախագծով ստորգետնյա հանքի շահագործման սկզբում հանքի լեռնակապիտալ աշխատանքների արդյունքում առաջացող՝ 2,646 մ^3 ծավալով ապարները, որոնք ներկայացված են հիդրոթերմալ փոփոխված պորֆիրիտներով, տուֆիտներով, տուֆավազաքարերով և տուֆափշրաքարերով, նույնպես տեղադրվելու են լցակույտերի տարածքում, որի համար կպահանջվի լրացուցիչ՝ 585 մ^2 մակերես:

Ստորգետնյա հանքի շահագործման համար կպահանջվեն արտադրական (հանքաքարի բեռնման) հրապարակ՝ 581 մ^2 մակերեսով և մոտեցման ճանապարհ՝ 844 մ^2 մակերեսով, որոնք կառուցվելու են չխախտված հողերի վրա: Ընդհանուր նախատեսվում է 1,425 մ^2 մակերեսով չխախտված հողերի վրա նոր ենթակառուցվածքի կառուցում, ինչի արդյունքում կառաջանա

ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

285 մ^3 ծավալով հողի բերրի շերտ, որը ժամանակավոր պահվելու է հատուկ հատկացված տարածքում, որը զբաղեցնելու է 150 մ^2 մակերես: Պահեստավորված հողի բերրի շերտը, արդյունահանման աշխատանքներն ավարտելուց անմիջապես հետո, կօգտագործվի ռեկուլտիվացման աշխատանքների համար:

Նախագծով նախատեսվում է խախտված հողերի լեռնատեխնիկական և կենսաբանական վերականգնման միջոցառումներ, որոնք ներառում են՝ բացահանքի լցնում մակաբացման ապարներով, դրանց և մակաբացման ապարների լցակույտի մակերեսների հարթեցում և ամրացում՝ հանված հողաբուսային զանգվածով՝ հողի շերտի մասնակի վերականգնումով: Կենսաբանական վերականգնման նպատակով նախատեսված է ցանքս: Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկումն իրականացվել է Կառավարության 18.08.2021թ. թիվ 1352-Ն որոշմամբ սահմանված կարգով: Ռեկուլտիվացման աշխատանքների իրականացման համար ծախսերի արժեքն ընդհանուր գնահատվել է 2,403,470 ՀՀ դրամ (2.6 հա մակերեսի վերականգնման համար):

Քարաբերդի հանքի շահագործման ընթացքում կառաջանան թափոններ, այդ թվում ընդերքօգտագործման և սպառման թափոններ, որոնց տեսակները, դասակարգումը, առաջացող ծավալները և նկարագիրը բերված են ՇՄԱԳ հաշվետվությունում: Թափոնները հավաքվում և պահպանվում են հատուկ նախատեսված տարածքներում՝ հետագայում այն վերամշակող ընկերություններին վաճառելու նպատակով կամ, համապատասխան պայմանագրի առկայության դեպքում, տեղափոխվում են տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր: Նախագծով նախատեսված հանքի լեռնակապիտալ աշխատանքների ընթացքում առաջացող ընդերքօգտագործման թափոնները, դատարկ ապարները՝ 2.6 հազ. մ^3 ծավալով, անմիջապես հանքից բեռնվում են և տեղափոխվում թիվ 3 հանքուղու ելքամաս:

Նախատեսվող գործունեության տարածքին մոտ գտնվող բնակավայրը Քարաբերդն է, որը գտնվում է հանքավայրից 1.5 կմ հեռավորության վրա: Հաշվի առնելով, որ տեխնիկայից անջատվող աղմուկը և թրթռումը չեն կարող տարածվել նշված հեռավորության վրա, կարելի է փաստել, որ բնակելի տների բնակիչների վրա աղմուկի և թրթռման ազդեցություն չի դիտվի: Հանքաքար տեղափոխող բեռնատարներից արձակվող աղմուկի ազդեցությունը (քանի որ անցնում է բնակելի տների մոտով) մեղմացնելու նպատակով ՇՄԱԳ հաշվետվության Բնապահպանական կառավարման պլանում ներկայացվել են միջոցառումներ:

Անմիջապես հանքի շահագործման արդյունքում աղտոտված արտահոսք չի առաջանա, անձրևաջրերի և ձնհալքի հոսքերը՝ շնորհիվ ռելիեֆի, կհեռանան տեղանքից՝ առանց աղտոտվելու, իսկ հանքի խոռոչներ լցվող հոսքերը հիմնականում հատակի ճեղքերի և դատարկությունների միջոցով կներծծվեն խորքերը: Ստորգետնյա հանքի շահագործման ժամանակ հանքում օգտագործվող փոշենստեցման ջրերը կներծծվեն ապարների մեջ: Ստորգետնյա հանքից հանքաջրերի արտամղման դեպքում, որն իրականացվելու է պոմպի միջոցով, Ընկերությունը նախատեսում է հանքաջրերի կանոնավոր մոնիթորինգ և մաքրում:

Շրջանի հարուստ կենսաբազմազանության պահպանության նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներին մասնակցող անձնակազմն անցնելու է հատուկ վերապատրաստում և ծանոթանալու է տարածքի բուսական և կենդանական աշխարհին, հատկապես՝ ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ տեղեկատվությանը: Աշխատանքների ընդգրկման տարածքում նախնական

ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

դիտարկումներով խոշոր կաթնասունների և թռչունների բնադրավայրեր չեն արձանագրվել, ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսերի և կենդանիների տեսակներ չեն հայտնաբերվել:

ՇՄԱԳ-ում ներկայացվել են ստորգետնյա հանքում հնարավոր արտակարգ իրավիճակները և դրանց կանխարգելման և մեղմացման միջոցառումների ծրագիր, որի հիման վրա, մինչև արդյունահանման աշխատանքների իրականացումը, յուրաքանչյուր վթարի/վթարային իրավիճակի համար կմշակվեն արտակարգ իրավիճակներին արձագանքման գործողությունների պլաններ:

Ստորգետնյա հանքի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա նվազեցնելու նպատակով՝ նախատեսվում է արտադրական հրապարակի տարածքի եզրային հատվածներով իրականացնել ծառատունկ տարածաշրջանին բնորոշ տեսակներով՝ թխկի, հաճարենի և հացենի, իսկ 844 մ^2 մակերեսում մոտեցնող ճանապարհները բարեկարգվելու են:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/կանխարգելման նպատակով նախատեսվում են մշտադիտարկումներ՝ կապված օդի, ջրի, հողի, բուսական և կենդանական աշխարհի վրա նախատեսված աշխատանքների հնարավոր հետևանքների փաստման համար: Շրջակա միջավայրի բաղադրիչների մշտադիտարկումների իրականացման նպատակով Ընկերությունը նախատեսում է տարեկան հատկացնել 1,300,000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Փորձաքննական գործընթացում ՇՄԱԳ հաշվետվությունը, օրենսդրական պահանջներին համապատասխանեցնելու նպատակով, ուղարկվել է Ընկերությանը լրամշակման: Հաշվի են առնվել ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ գործընթացի մասնակիցների՝ շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, առողջապահության, ներքին գործերի, ԿԳՄՍ նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Լոռու մարզպետարանից և Փամբակի համայնքապետարանից ստացված կարծիքները: Լոռու մարզպետարանի կողմից առաջարկվել է յուրաքանչյուր տարի Փամբակ համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերի ներդրումների համար նախատեսված 24 մլն դրամն առնվազն կրկնապատկել, ինչպես նաև առաջարկվել է յուրաքանչյուր տարի սոցիալապես անապահով ընտանիքներին դեղորայքի տրամադրման գործընթացը վերապահել Փամբակի համայնքապետարանին՝ այդ աշխատանքն համակարգված իրականացվելու նպատակով, ինչը հաշվի է առնվել Ընկերության կողմից: Փամբակի համայնքապետարանի կողմից փորձաքննության ներկայացված գրությամբ նշվել է, որ Ընկերությունը, համայնքի հետ համագործակցելով, իրականացրել են համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը միտված ծրագրեր, արդյունահանման ժամկետի երկարացման պարագայում ևս պատրաստ է շարունակել համագործակցությունը (գրավոր ներկայացվել է սոցիալական ծրագրերի փաթեթը՝ ֆինանսական ներդրումներով): Փամբակի համայնքապետարանի գրությամբ կարևորվելով բնապահպանական նորմերի պահպանումը՝ Ընկերության կողմից հետագա գործունեության չիրականացման վերաբերյալ խոչընդոտ հանդիսացող փաստեր չեն ներկայացվել, նշելով, որ Քարաբերդի ոսկու հանքավայրն (Կենտրոնական տեղամաս) արդեն իսկ գործող հանքավայր է, ունի ձևավորված ենթակառուցվածքներ, ժամկետի երկարաձգմամբ նոր ենթակառուցվածքներ չեն ավելացվելու և բնապահպանական նոր խնդիրներ չեն առաջանալու: Գործող և նախատեսվող/շարունակելի գործունեությունը հնարավորություն կտա պահպանել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը և խթանել նոր ծրագրերի ներդրմանը:

Ընկերությունն իրականացրել է և շարունակում է իրականացնել միջոցառումներ, որոնք միտված են կանխարգելելու և նվազեցնելու մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա հնարավոր ռիսկերը և ազդեցությունները՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների էկոլոգիական ցուցանիշները սահմանային թույլտարելի մակարդակներում ապահովելու համար: Ընկերության կողմից 2023 թ. իրականացվել են մշտադիտարկումներ՝ հողի և ջրի փորձաքննված նմուշներում նկատվել են որոշ ցուցանիշների գերազանցումներ, արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ՇՄԱԳ հաշվետվությունում:

Փորձաքննության փուլում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Լոռու մարզի Փամբակ համայնքի Քարաբերդ բնակավայրում կազմակերպված և իրականացված հանրային լսման ընթացքում մասնակիցների կողմից բարձրացվել են մի շարք հարցեր՝ կապված Վանաձոր քաղաքը /որը գտնվում է հանքավայրից մոտ 10 կմ հեռավորության վրա/ ազդակիր ճանաչելու հետ, տարածաշրջանի զբոսաշրջային կլաստերների հետ, նախկինում խախտված հողերի ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման հետ, ինչպես նաև տարածաշրջանում ուրանի պաշարների առկայության և այլ հարցերի հետ: Նշված հարցերի վերաբերյալ ներկայացվել են պատասխան պարզաբանումներ և հիմնավորումներ: Փորձաքննության գործընթացում ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում: Նախատեսված բնապահպանական կառավարման պլանը մոնիթորինգի ծրագրի հետ համատեղ թույլ կտա գնահատել և հսկել ազդեցությունը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա և ժամանակին ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ շրջակա միջավայրի աղտոտումները կանխարգելելու համար:

Փորձաքննական պահանջներ

1. Գործունեության իրականացման ընթացքում պահպանել և ապահովել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական լուծումների, բնապահպանական պահանջների կատարումը (ըստ անհրաժեշտության նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ շրջակա միջավայրի բաղադրիչների համար սահմանված նորմատիվներն ապահովելու համար), ինչպես նաև Փամբակ համայնքում Ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացումը:
2. Հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով ապահովել ստորգետնյա հանքի շահագործման փուլի համար նախատեսված մշտադիտարկումների իրականացումը և հաճախականությունը և ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացված շրջակա միջավայրի բաղադրիչների մշտադիտարկումների արդյունքների (նաև՝ N4 բովանցքից արտահոսող ջրի որը օգտագործում են գյուղացիները քանակի և որակի մշտադիտարկում, հողաբուսական շերտի մշտադիտարկում) վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն (առաջնորդվելով Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման պահանջներով):
3. Փոշու տարածումը և առաջացումը կանխարգելելու նպատակով առաջնորդվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով, մասնավորապես՝

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

կարևորելով ստորգետնյա լեռնային փորվածքներում պայթեցման աշխատանքների ժամանակ փոշեկանխման բնապահպանական միջոցառումների պարտադիր կատարումը (ապահովելու համար ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 7-ի N160-Ն որոշմամբ սահմանված՝ մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունները):

4. Ապահովել հանքաջրերի կանոնավոր մոնիթորինգի և ռեագենտային մշակման եղանակով մաքրման տեխնոլոգիական գործընթացի իրականացումը, պարզարանում պարզեցված/մաքրված ջուրը Փամբակ գետ հեռացնել միայն ջրի որակին ներկայացվող էկոլոգիական նորմերին համապատասխանելու դեպքում, իսկ նստվածքը տեղափոխել այդ նպատակի համար հատկացված վայր:
5. Շինարարության և շահագործման փուլերում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները բացառելու նպատակով առաջնորդվել ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի N 64-Ն որոշման պահանջներով՝ բացառելով արտադրական արտահոսքը ջրային ռեսուրսներ և բաց ջրավազաններ:
6. Հողի բերրի շերտի հետ կապված բնապահպանական պահանջները և կարգավորումներն (բերրի շերտի հանման պայմանները, դրա պահպանման և տեղափոխման տեխնոլոգիաները) իրականացնել Կառավարության 2017 թվականի N 1404-Ն որոշմամբ սահմանված նորմերին համապատասխան:
7. Արտադրական տարածքում առաջացող թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացնել ՀՀ օրենսդրական պահանջներին համպատասխան (վտանգավոր թափոնների գործածությունը՝ որպես լիցենզավորման ենթակա գործունեություն, իրականացնել համապատասխան լիցենզավորված կազմակերպության կողմից):
8. Ապահովել հանքի արտադրական հրապարակի կանաչապատում՝ ծառատնկման միջոցով, և կենսաբանական ռեկուլտիվացիայի աշխատանքներում կիրառել նաև ծառաթփուտային տեսակներ:
9. Օրենսդրությամբ սահմանված կարգով վերջնական փակման/ռեկուլտիվացման նախագծային փաթեթը՝ ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ փորձաքննության:
10. Արտադրական նպատակով ջրօգտագործման համար օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել շրջակա միջավայրի նախարարություն՝ նոր ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար:
11. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի № 438 որոշման 43-րդ կետի՝ հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:
12. Գործունեության իրականացման ընթացքում ղեկավարվել առողջապահության նախարարի 2012 թ. սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն և 2002 թվականի մարտի 6-ի թիվ 138 հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԱՍՍԱԹ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Լոռու մարզի Քարաբերդի ոսկու հանքավայրի Կենտրոնական տեղամասի (№366 ընդերքօգտագործման իրավունք) ժամկետի երկարաձգման, ստորգետնյա հանքի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան